


Թ

Լեւոնի ծագումը, ամուսնութիւնն ու

քաղաւոր պատկուիլը



Եւոն Դ (1320-1342) իր հօրաքեռորդի Զուանը, որդին Զապուենի եւ Ամօրի Լուսինեանի, Կիպրոսէն Սիս կանչելով՝ Հայոց գունդստապլ կարգած եւ իր պալատին բոլոր գործերն անոր յանձնած էր : Եւ որպէս զի Զուան աւելի՛ անձնութրութիւն ցոյց տայ իրեն՝ ամուսնացուց զայն Վրաց Գիորգի է թագաւորին (1306-1346) Սուլտան անուն աղջրկան հետ (1) :

Այս ամուսնութիւնը կատարուեցաւ հաւանականաբար 1338-ին. վասն զի, ինչպէս վերը տեսանք (եր. 22), Զուան մեռած ժամանակ (1344) երկու անչափահաս զաւակներ թողած է. — մին՝ (Պեմունդ) հինգ տարական,

(1) Ժամանակակից պատմիչը՝ Դարդել՝ չըսեր քե Վրաց ո՛ր քաղաւորին աղջիկն եր Սուլտան . բայց հետեւելով ժամանակագրութեան՝ ապահով կերպով կրնամ բնել, քե Բագրատունիներու ցեղէն Գիորգի է-ի աղջիկն եր այն : — Լեւոն Դ քաղաւոր օծուած է 1320-ին, իսկ մեռած է 1342-ին . արդ այս ժամանակամիջոցին մեջ Վրաց արքայական գահը բազմած կը գրսնեն վերը յիշուած Գիորգի է-ը, որուն յաջորդած է իր որդին Դաւիթ (1346-1360) : Տե՛ս De Villeneuve, *Mtzheth et Iberie*. Paris 1875, եր. 146-148 :